ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
21 հունվարի 2019 թվականի N 11-Ա

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 68-րդ հոդվածի 6-րդ կետով, հիմք ընդունելով «Մեղրու տարածաշրջանային բժշկական կենտրոն» ՓԲԸ կանոնադրության 6.1-րդ կետի 3-րդ մասը, Հիմնադրի և Ընկերության տնօրենի միջև 2013 թվականի հուլիսի 29-ին կնքված N 15 աշխատանքային պայմանագրի 3.6-րդ կետի ա) և բ) դրույթները՝

կ ա ր գ ա դ ր ում ե մ.

1. «Մեղրու տարածաշրջանային բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության ընթացիկ գործունեությունը, 2013 թվականի հուլիսի 29-ին կնքված N 15 աշխատանքային պայմանագրի պահանջների կատարումն ուսումնասիրելու նպատակով ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով.

Արմեն Թադևոսյան	-	մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության առողջապահության բաժնի պետ (հանձնաժողովի նախագահ)
Նարինե Աթայան	-	մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ
Սյուզաննա Խաչատրյան	-	մարզպետարանի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի գլխավոր մասնագետ

2. Հանձնաժողովին՝ ուսումնասիրություններն ավարտել եռօրյա ժամկետում և արդյունքները ներկայացնել քննարկման:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

21.01 2019

X

ՀՈՒՆԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

Подписано: POGHOSYAN HUNAN 4005640117

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Հ. ՊՈՂՈՍՅԱՆ

2019թ. հունվարի 21
ք. Կապան